ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԻ

ՀՐԱՄԱՆ

Թիվ 12-Լ

ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱԶՄԸ ԵՎ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի թիվ 1671-Ն որոշման հավելվածով հաստատված կարգի 3-րդ կետի պահանջներով և ՀՀ վարչապետի 2018թ. հունիսի 11-ի «ՀՀ ոստիկանության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 751-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 20-րդ կետի 8-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Ստեղծել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողով հետևյալ կազմով՝

- ՀՀ ոստիկանության պետի տեղակալ, ոստիկանության գնդապետ Հ.Միրյան (հանձնաժողովի նախագահ),

- ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության պետի տեղակալ, ոստիկանության փոխգնդապետ Վ.Սահակյան (հանձնաժողովի նախագահի տեղակալ),

- ՀՀ ոստիկանության պետական պահպանության գլխավոր վարչության ծառայության վարչության պետի տեղակալ, ոստիկանության մայոր Ա.Գևորգյան,

- ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Ղազարյան,

- ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի պետի տեղակալ, ինքը և մասնավոր պահնորդական գործունեության վերահսկողության բաժանմունքի պետ, ոստիկանության փոխգնդապետ Ա.Նազարյան,

- ՀՀ ոստիկանության շտաբի կազմակերպական-վերլուծական վարչության բարեփոխումների և կառավարչական որոշումների համակարգման բաժնի ՀԿՀ ավագ տեսուչ, ոստիկանության մայոր Ա.Մելիքյան

- ՀՀ ոստիկանության կրթահամալիրի ուսումնական կենտրոնի «Ընդհանուր պատրաստականություն» կրթաճյուղի պետ, ոստիկանության գնդապետ Ա.Ալեքսանյան,

- ՀՀ ոստիկանության հասարակական անվտանգության ապահովման գլխավոր վարչության հասարակական կարգի ապահովման վարչության լիցենզավորման և թույլտվության աշխատանքների կազմակերպման բաժնի մասնավոր պահնորդական գործունեության վերահսկողության բաժանմունքի տեսուչ /ի հաշիվ ավագ տեսուչի/, ոստիկանության լեյտենանտ Ա.Աղաջանյան (հանձնաժողովի քարտուղար):

2. Հաստատել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի կանոնադրությունը՝ համաձայն հավելվածի:

3. Հրամանը հայտարարել թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի անդամներին:

ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՆԴԱՊԵՏ Ա.Սարգսյան **Ա.ՍԱՐԳՍՅԱՆ**

«25» 02 2020թ.
ք.Երևան

Հավելված
ՀՀ ոստիկանության պետի
ժամանակավոր պաշտոնակատարի

«25»__02__2020թ.

թիվ 12 -Լ հրամանի

Կ Ա Ն Ո Ն Ա Դ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԹԻԿՆԱՊԱՀԻ ԵՎ ՊԱՀՆՈՐԴԻ ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

Ի.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովն (այսուհետ՝ հանձնաժողով) իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ կառավարության 2012թ. դեկտեմբերի 27-ի «Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման կարգը սահմանելու մասին» թիվ 1671-Ն որոշման, սույն հրամանի և այլ իրավական ակտերի պահանջներով:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԽՆԴԻՐՆ ՈՒ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

2. Հանձնաժողովի խնդիրը թիկնապահի կամ պահնորդի մասնագիտական կրթություն ստացած անձանց որակավորման ստուգումն է:

3. Հանձնաժողովն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) որակավորման ստուգում թեստավորման առաջադրանքների միջոցով՝ էլեկտրոնային եղանակով.

2) որակավորման ստուգման դրական գնահատականների հիման վրա ընդունում է որոշում թեկնածուներին որակավորման ստուգման վկայականներ տրամադրելու մասին:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

4. Թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման հանձնաժողովի գործունեությունն ուղղված է թիկնապահների և պահնորդների որակավորման ստուգումը պատշաճ կերպով կազմակերպելուն:

5. Հանձնաժողովը իր աշխատանքները կազմակերպում է նիստերի և դրանց նախորդող նախապատրաստական միջոցառումների իրականացման միջոցով:

6. Հանձնաժողովը կազմված է հանձնաժողովի նախագահից, նախագահի տեղակալից, հինգ անդամներից և քարտուղարից:

7. Հանձնաժողովի նիստերի ընթացքի և ընդունված որոշումների վերաբերյալ կազմվում է արձանագրություն, որը ստորագրում են հանձնաժողովի նախագահը, անդամները և քարտուղարը:

8. **Հանձնաժողովը.**

1) իրավազոր է, եթե նիստին մասնակցում են հանձնաժողովի անդամների կեսից ավելին.

2) կազմակերպում և իրականացնում է որակավորման ստուգման աշխատանքները.

3) ընդունում է որակավորման ստուգմանը մասնակցելու դիմում ներկայացրած անձի կողմից որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը.

4) համապատասխան հարցումներ կատարելու միջոցով պարզում է որակավորման ստուգմանը մասնակցելու դիմում ներկայացրած անձի կողմից դիտավորյալ հանցագործություն կատարած լինելու կամ դիտավորյալ հանցագործության համար դատվածության՝ սահմանված կարգով հանված կամ մարված լինելու, ինչպես նաև համապատասխան բուժհիմնարկներում հոգեկան հիվանդության, հարբեցողության կամ թմրամոլության պատճառով հաշվառված չլինելու հանգամանքները.

5) կազմում է որակավորման ստուգման թեստավորման հարցաշարերը և թեստավորման առաջադրանքները՝ ըստ թիկնապահի և պահնորդի մասնագիտությունների.

6) որակավորման ստուգման թեստավորման հարցաշարերը ստուգման օրվանից ոչ ուշ քան վեց ամիս առաջ պարտադիր հրապարակում է http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում.

7) որակավորման ստուգմանը մասնակցելու համար անհրաժեշտ փաստաթղթերի ներկայացման ժամկետների վերաբերյալ որակավորման ստուգումից առնվազն մեկ ամիս առաջ ոստիկանության http://www.police.am ինտերնետային կայքում և http://www.azdarar.am հասցեում գտնվող Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական ինտերնետային կայքում տալիս է իրազեկում.

8) որակավորման ստուգման անցկացման օրվա, ժամի և տեղի վերաբերյալ ստուգմանը մասնակցելու դիմում ներկայացրած անձանց պատշաճ կերպով ծանուցում է որակավորման ստուգումից առնվազն յոթ օր առաջ: Ծանուցումը տրվում է գրավոր՝ ըստ անձի նշած հասցեի, իսկ նրա ցանկությամբ՝ նաև հեռախոսով, էլեկտրոնային փոստով.

9) հրապարակում է որակավորման ստուգման օրվա արդյունքները՝ նույն օրը ամփոփելուց հետո մեկ ժամվա ընթացքում.

10) քննարկում է որակավորման ստուգման արդյունքների հետ կապված բողոքները, որոնց պատասխանում է նույն օրը.

11) որակավորման ստուգման արդյունքներով 10 աշխատանքային օրվա ընթացքում թեկնածուներին տրամադրում է որակավորման ստուգման վկայականներ.

12) ընդունում է որակավորման ստուգման հետ կապված այլ որոշումներ.

13) իրականացնում է սույն հրամանով սահմանված այլ լիազորություններ:

9. Հանձնաժողովի անդամի՝ նիստին հարգելի պատճառով մասնակցության անհնարինության դեպքում այդ մասին պատշաճ տեղեկացվում է հանձնաժողովի նախագահը:

10. Հանձնաժողովը որոշումները ընդունում է ձայների պարզ մեծամասնությամբ:

11. Քվեարկությանը մասնակցում են հանձնաժողովի նախագահը, նախագահի տեղակալը և նիստին ներկա անդամները:

12. Քվեարկության արդյունքում ձայների հավասարության դեպքում որոշումն ընդունվում է թեկնածուի օգտին:

13. **Հանձնաժողովի նախագահը՝**

1) ղեկավարում է հանձնաժողովի աշխատանքները, հրավիրում և վարում է հանձնաժողովի նիստերը.

2) հսկողություն է իրականացնում որակավորման ստուգման բնականոն ընթացքի ապահովման ուղղությամբ.

3) ստորագրում է հանձնաժողովի նիստի արձանագրությունները և ընդունված այլ որոշումները,

4) իրականացնում է սույն հրամանով սահմանված այլ լիազորություններ:

14. Հանձնաժողովի նախագահի՝ նիստին չմասնակցելու դեպքում նրան փոխարինում է հանձնաժողովի նախագահի տեղակալը:

15. Հանձնաժողովի քարտուղարը՝

1) նախապատրաստում է հանձնաժողովի նիստերը.

2) ընդունում, հավաքում և պահպանում է անձանց կողմից որակավորման ստուգմանը մասնակցելու համար ներկայացված անհրաժեշտ փաստաթղթերը.

3) հանձնաժողովի նիստի անցկացման վայրի, օրվա և ժամի վերաբերյալ պատշաճ կերպով իրազեկում է հանձնաժողովի անդամներին.

4) արձանագրում է հանձնաժողովի նիստի ընթացքը, ստորագրում նիստի արձանագրությունը:

ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

16. Հանձնաժողովի գործունեությունը դադարեցվում է իրավունքի ուժով՝ թիկնապահի և պահնորդի որակավորման ստուգման անհրաժեշտությունը վերանալու դեպքում: